ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՄԱՆԱՍՅԱՆԻ ԱԼԲԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՐԱՎՍԼԱՎԱԿԱՆ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, Ազգանունը

Մուշեղ Մանասյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ալբանիայի Հանրապետություն և Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն, 5-9.հունիս.2017թ.

4. Հրավիրող կողմը

Եվրոպական Միություն

Ճանաչողական այցը կազմակերպվել է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը տարածաշրջանային զարգացման գործողություններում» Եվրոպական միության ծրագրի շրջանակներում:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Փորձի փոխանակում, փոխադարձ ուսուցում Ալբանիայի և Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական հանրապետություններում տարածքային զարգացման պլանավորման և ֆինանսավորման այլընտրանքային մեխանիզմների կիրառման ԵՄ պրակտիկային ծանոթություն:

Ազգային, տարածաշրջանային և տեղական իշխանությունների հետ հանդիպումներ՝ քննարկելու տարածքային զարգացման քաղաքականության հիմնախնդիրները և կիրառված կամ պլանավորված բարեփոխումները:

6. Քննարկված թեմաները

Ալբանիայի և Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական հանրապետությունները համատեղելի են Հայաստանի Հանրապետության հետ իրենց աշխարհագրական պայմանների, բնակչության թվի և սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյուններից:

Ալբանիայի Հանրապետություն

ա) սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը Տիրանայի և մնացած տարածքների միջև,

բ) տարբերությունները քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև՝ չափավոր տարբերությունները մնացած տարածքների հետ,

գ) համեմատաբար ցածր անհամաչափությունները չորս մարզային կառավարման տարածքների միջև,

դ) բնակչության, աշխատուժի, ծառայությունների և բիզնեսների կենտրոնացումը մեկ վայրում և նրա բացասական ազդեցությունները,

ե) վերջին տարիներին Ալբանիայի կառավարության կողմից ձեռնարկված տարածքային և վարչական բարեփոխումները, որը պաշտոնապես ընդունվել է 2014 թվականին՝ նվազեցնելով համայնքների (կոմունաների թիվը 373-ից 61-ի, խառը բնույթ ունեցող գյուղական և քաղաքային համայնքապետարաններ) թիվը,

զ) Կառավարությունը հավանություն է տվել նաև ապակենտրոնացման ռազմավարությանը և ապահովում է տարբեր օրենքների վերանայմումը և բարեփոխումը,

է) Տարածքային Զարգացման Հիմնադրամի օգտակարությունը մունիցիպալ նախագծերի պլանավորման և իրականացման գործում,

ը) տարածքային զարգացման քաղաքականությունը, իրավիճակը և բարեփոխումները, այն իրականացնող գործակալությունների պրակտիկ հեռանկարները, Ալբանիայի Հանրապետությունում տարածքային զարգացման համար նոր ինստիտուցիոնալ կարգավորումների կողմից ստեղծված փորձառությունները, մարտահրավերները և հնարավորությունները,

թ) տարածքային զարգացման պլանավորման և ֆինանսավորման համար կիրառվող մեխանիզմները, ռազմավարական ներդրումների և տարածքային զարգացման միջև փոխհարաբերությունները,

ժ) տարածքային զարգացման փորձը Ալբանիայի Հանրապետությունում փոխազդեցությունը տարածքային զարգացման և տարածքային կառավարման բարեփոխումների ու ազգային կառավարման համակարգերի միջև:

Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետություն

ա) Երկրի փոքր չափերն, իր համեմատաբար կարճ պատմությունը որպես ինքնիշխան պետություն և անցումային շրջանը, չափից դուրս անհամաչափությունը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման շրջանակներում, մասնավորապես մայրաքաղաք Սկոպյեի և երկրի մնացած մասերի միջև,

բ) մարզերում զգալիորեն ցածր մրցունակության և տնտեսական արդյունքները, բնակչության ներգրավվածությունը և զբաղվածությունը տնտեսության մեջ,

գ) առկա բնակչության գործազրկության մակարդակը երկրի որոշ մասերում, առավել քան 50%-ը տվյալ ժամանակաշրջանի համար, մասնավորապես երիտասարդների շրջանում, համաչափ զարգացման քաղաքականության իրականացման հետևանքով առկա նվազման դրական միտումները,

դ) անհրաժեշտ միջոցների տրամադրման արդյունքում տարածքային զարգացման քաղաքականության հաջող իրականացումը (օրենքով սահմանվում է՝ հատկացնել ՀՆԱ-ի 1%-ը ազգային բյուջեից, նպաստելու պլանավորված շրջանների զարգացմանը),

ե) ապակենտրոնացման գործընթացը որպես շարունակական բարեփոխումների ուղի տնտեսության համար, որը սկսվել է 2005 թվականից, երկու փոխանցումների տեսքով՝ վարչական և ֆինանսական: 2013 թվականին՝ համայնքապետարանների վերակազմավորումից հետո, տեղական ինքնակառավարման մարմինները ներկայացնում են 84 տեղական կառավարման մարմիններից բաղկացած վարչական միավորներ՝ առաջին կարգի վարչական միավորներ կամ քաղաքապետարաններ, որից 10 քաղաքապետարաններ կազմում են Սկոպյե քաղաքը, որն ունի հստակ կարգավիճակ: Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետությունը բաժանված է 8 վարչական տարածքների,

զ) տարածքային զարգացման ռազմավարությունների մշակումն ու իրականացումը, տեղական ինքնակառավարման մարմինների համակարգումն ու համագործակցությունը, ԵՄ ծրագրերի իրականացման փորձի փոխանակումը Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետությունում,

է) տարածքային զարգացման ոլորտում ՓՄՁ-ների մասնակցությունը, տարածաշրջանային տիպի նախագծերի իրականացմանը,

ը) տարածքային զարգացման քաղաքականության սահմանումը, տարածքային կառավարման համակարգի և Կառավարության փոխադարձ կապը:

թ) ազգային հեռանկարի տեսանկյունից հավասարակշռված տարածքային զարգացման մոտեցման հիմնական շահերը և մարտահրավերները ԵՄ-ում ինտեգրվելու գործընթացում,

ժ) տարածքային զարգացման քաղաքականության իրականացման պրակտիկ մոտեցումները և նախագծերի նախապատրաստման և իրականացման փորձերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ալբանիայի Հանրապետություն

Դուրրեսի քաղաքապետարանում.

Տարածքային զարգացման Գործակալություն 2-ում.

Վարչապետի գրասենյակում՝ բիզնես ներդրումների ռազմավարական ստորաբաժանում/զարգացման և համագործակցության վարչության, ռազմավարական պլանավորման և զարգացման ստորաբաժանման, զարգացման և արտասահմանյան օգնության վարչության, քաղաքային զարգացման նախարարության հետ.

Ազգային Տարածքային Պլանավորման Գործակալությունում.

Պոլիս համալսարանում.

Ֆիերի քաղաքապետարանում.

Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետություն

Հարավ-արևմտյան պլանավորման Տարածաշրջանի Զարգացման Կենտրոնում.

Հարավ-արևմտյան տարածաշրջանի տուրիստական միավորումում (կլաստեր) Օհրիդ քաղաքում.

Մակեդոնիայի Հանրապետության տեղական ինքնակառավարման նախարարությունում.

Տնտեսական հարցերով փոխվարչապետի գրասենյակում.

Տարածքային զարգացման բյուրոյում.

Վեվչանի համայնքում

Այցելություններ Օհրիդ,

(փոքր, միջին բիզնեսի և համայնքի համագործակցությունը տուրիզմի զարգացման ոլորտում),

Վեվչանի համայնք.

(ծանոթություն տուրիզմի զարգացման ոլորտում, սեփական հնարավորությունների կիրառումը ԵՄ զարգացման ծրագրի շրջանակում)

Կանյոն Մատկա.

(սեփական հնարավորությունների կիրառումը էկոտուրիզմի զարգացման ոլորտում),

Մակեդոնսկո Սելո (էթնիկ գյուղ).

(ազգային ճարտարապետության նմուշների և ազգային մշակույթի ցուցադրում տուրիզմի զարգացման ոլորտում):

Հանդիպումների ընթացքում ներկայացվող նյութերի մասով տեղի են ունեցել բազմակողմանի քննարկումներ, բանախոսներին տրվել են հարցեր և ստացվել սպառիչ պատասխաններ ներկայացվող նյութի շրջանակներում.

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Գործուղման ընթացքում որոշումներ և պայմանավորվածություններ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել.

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Այցը կրել է ճանաչողական բնույթ և որևէ առաջարկություններ չեն եղել,

10. Գործուղվողը

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Մ. Մանասյան